

**«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՄ-ԲՄԱՊՁԲ-25/140**

ք. Երևան

«31» 10 2025թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավորի տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԲՏ Սիգնալ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Ամիրովի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 295,490,365.00 (երկու հարյուր իննսունհինգ միլիոն չորս հարյուր իննսուն հազար երեք հարյուր վաթսուհինգ) ՀՀ դրամ, Վաճառողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան հանձման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացույցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալիս օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն

կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվի երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումն փոխարինման դեպքում նաև նոր ապահովը Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի
մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղդամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավորի տնօրենի ժ/պ՝ _____ Բ. Սեդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.



ՎԱՃԱՌՈՂ

«ԲՏ Սիգնալ» ՍՊԸ
Ղազախստանի Հանրապետություն, Աստանա
քաղաք, Սարյարկա շրջան, Կոկտալի բնակելի
թաղամաս, Շուգիլա փողոց, շենք 24
«Եվրասիական բանկ» ԲԲԸ
Հ/Հ KZ9494805KZT22030929
ՀՎՀՀ 100840003122

Տնօրեն՝ _____ Դ. Ասիիրով
(ստորագրություն)
Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄՆԱՆԱԿԱԳՈՒՅՑ*

Ապրանքի									
2/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (<< դրամ)	Ընդհանուր գինը (<< դրամ)	Ընդհանուր քանակը	Մատակարարման*	
								Հասցեն	Ժամկետը*
1	32421700/502	Երևանի մետրոպոլիտենի հատուկ նշանակության օբյեկտների կառուցվածքափորված փորված օպտիկամանր աթելային տեղեկատվական փոխանցման մալուխային ցանցերի ներդրման վերաբերյալ, ինչպես նաև կատարման պայմանների, համակարգի մոնիթորինգի և ընդունման կարգի, երաշխիքային աշխատանքի պայմանների, պատվիրատուին պահուստային պահեստամասերով, գործընթացով և պարագաներով ապահովելու, պատվիրատուի աշխատանքային անձնակազմի վերապատրաստման անցկացման պահանջների վերաբերյալ ներկայացված է	Մանրամասն տեղեկություններ Երևանի մետրոպոլիտենի հատուկ նշանակության օբյեկտների կառուցվածքափորված օպտիկամանր աթելային տեղեկատվական փոխանցման մալուխային ցանցերի ներդրման վերաբերյալ, ինչպես նաև կատարման պայմանների, համակարգի մոնիթորինգի և ընդունման կարգի, երաշխիքային աշխատանքի պայմանների, պատվիրատուին պահուստային պահեստամասերով, գործընթացով և պարագաներով ապահովելու, պատվիրատուի աշխատանքային անձնակազմի վերապատրաստման անցկացման պահանջների վերաբերյալ ներկայացված է	հատ	295,490,365.00	295,490,365.00	1	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 78, Արարատյա ն 87, Մետրոպոլիտենի կայարաններ և/կամ ըստ Պատվիրատուի պահանջի	Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիր/հա մածայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատակարարումն իրականացվելու է 6 ամսվա ընթացքում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Երևանի մետրոպոլիտենի հատուկ նշանակության օբյեկտների կառուցվածքավորված օպտիկամանրաթելային տեղեկատվական տվյալների փոխանցման մալուխային ցանցերի համակարգի նախագծման և ներդրման

Առաջարկվող ապրանքը					
Հավաքածնի համար	ապրանքանիշային Անուն	ապրանքանիշ	մոդել	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրեր
Ցանցային սարքավորումներ					
Կառավարման մակարդակ (կենտրոնական մակարդակ)					
Նախագծված ցանցի կենտրոնական շերտը ներառում է երեք ֆունկցիոնալ հատված՝ հիմնական շերտ, ագրեգացման շերտ և մուտքի շերտ: Բոլոր բաղադրիչները ինտեգրված են մեկ խափանումների նկատմամբ դիմացկուն համակարգում՝ յուրաքանչյուր շերտում ավելորդությամբ:					
	Հիմնական անջատիչ	H3C	S5590-28T8XC-EI	«Նյու Էջ 3 Սի Թեքնոլոջիս» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	Երկու L3 անջատիչներ, որոնք միավորված են մեկ կոյտի կամ տրամաբանական սարքի մեջ՝ հետևյալ բնութագրերով. - Ethernet 10/100/1000BASE-T միացքների քանակը (ներառյալ 4 համակցված միացքները). 28; - 8 SFP+ միացքիչների առկայություն՝ 1/10 Գբ/վ արագության աջակցությամբ; - Ինտերֆեյսի մոդուլներ տեղադրելու համար ընդլայնման անցքի առկայություն՝ 1; - Առաքման հավաքածուն ներառում է 8-պորտային 25G SFP28 մոդուլ, ինչպես նաև SFP+ և SFP28 ընդունիչ-ընդունիչներ տարբեր հեռավորությունների համար (850 նմ 300 մ-ում, 850 նմ 100 մ-ում, 1310 նմ 10 կմ-ում): - 3 մ SFP+ DAC մալուխի առկայություն; - Երկու 180 փոփոխյալ հզորությամբ փոփոխական հոսանքի աղբյուրներ՝ կարգավիճակի մոնիթորինգով; - Երկու օդափոխիչ՝ հետևի օդի ուղղությամբ; - RJ45 կոնսոլի միացք՝ 1; - Կառավարման պորտ (MGMT) 10/100/1000BASE-T: 1; - USB միացք՝ 1;

					- Ձևաչափը՝ 1U, 19" դարակի վրա տեղադրելի: - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ -5-ից մինչև +45 °C; - Թույլատրելի խոնավություն՝ 5%-ից մինչև 95% առանց խտացման: - Պրոցեսոր՝ երկմիջուկ 1.2 ԳՀց; - Ֆլեշ հիշողության ծավալ՝ 4 ԳԲ; - RAM (SDRAM): 2 ԳԲ; - Հիշողության բուֆեր փաթեթների պահպանման համար՝ 9 UFB; - Կոմսոացիայի թողունակություն՝ 2.4 Տբիթ/վրկ; - Փաթեթների վերահասցեավորման արագություն՝ > 462 Մաի/վրկ; - Չափսերը՝ 440 x 360 x 44 մմ; - Սարքի քաշը՝ 7 կգ; - Էլեկտրատեներգիայի սպառում (առավելագույնը): 114 Վտ; - L2 արձանագրությունների և գործառույթների աջակցություն՝ VLAN մինչև 4096, STP/RSTP/MSTP, LLDP, Jumbo Frames մինչև 13312 բայթ: - L3 արձանագրությունների աջակցություն՝ ստատիկ երթուղավորում, RIP, OSPF, IS-IS, BGP, ECMP, VRF; - IPv6 աջակցություն՝ RIPng, OSPFv3, IS-ISv6, BGP4+, DHCPv6, ND; - MPLS աջակցություն՝ ստատիկ LSP, LDP, MPLS VPN, VPLS, MCE; - Աջակցություն 9 անջատիչների վիրտուալիզացմանը մեկ տրամաբանական սարքի մեջ՝ կենտրոնացված կառավարմամբ, մեկ հասցեային տարածքով, երթուղային և անջատման արդյուսակների համաժամանցմամբ և > 480 Գբ/վ ներքին թողունակությամբ՝ ստեքի տարրերի միջև: - Աջակցություն սարքերի խմբի կառավարմանը որպես մեկ տրամաբանական անջատիչ; - Աջակցություն L2 և L3 արձանագրությունների համաժամանակյա աշխատանքին առանց միացված սարքերի միջև STP օգտագործելու:

					- MACsec (AES-256) աջակցություն բոլոր միացքներում; - VLAN և EVPN աջակցություն; - QoS աջակցություն՝ 8 հերթ, SP, WRR, CAR, Shaping, WRED; - Անվտանգության մեխանիզմներ՝ 802.1X, AAA, ACL, ARP/ND պաշտպանություն, uRPF; - Հեռաչափության, iQA-ի, PTP (1588v2), NTP-ի աջակցություն; - MTBF (խափանումների միջև միջին ժամանակը) 105 տարի; - MTTR (վերականգնման միջին ժամանակը) 1 ժամ; - Համապատասխանություն էլեկտրամագնիսական համատեղելիության և էլեկտրական անվտանգության չափանիշներին:
Ազդեցազիայի անջատիչներ	H3C	S5590-48TS4X2QC-EI	«Նյու Էջ 3 Սի Թեքնոլոջիա» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	Չորս L3 անջատիչներից բաղկացած հավաքածու՝ հետևյալ բնութագրերով. - 24 Ethernet 10/100/1000BASE-T միացքների առկայություն; - 24 100/1000 SFP պորտերի առկայություն; - 4 SFP+ միացքիչների առկայություն՝ 1/10 Գբ/վ արագության աջակցությամբ; - 40 Գբ/վ արագություն ապահովող 2 QSFP+ միացքիչների առկայություն: - Ինտերֆեյսի մոդուլներ տեղադրելու համար 1 ընդարձակման անցքի առկայություն; - RJ45 կոնսոլի միացք՝ 1; - Առանձին կառավարման միացք (MGMT) 10/100/1000BASE-T: 1; - USB միացք կարգավորման և թարմացումների համար՝ 1; - 19 դյույմանոց դարակաշարի վրա տեղադրելի, 1U բարձրությամբ; - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ -5-ից մինչև +45 °C;	

					- Թույլատրելի խոնավություն՝ 5%-ից մինչև 95% առանց խտացման: - Հավաքածուն ներառում է 2 x 180 վտ փոփոխական հոսանքի աղբյուրներ՝ կարգավիճակի մոնիթորինգով: - Հավաքածուն ներառում է 2 օդափոխիչ՝ հետևի փչման ուղղությամբ: - Հավաքածուն ներառում է 4-պորտային 25G SFP28 մոդուլ: - Հավաքածուն ներառում է 3 մ QSFP+ մալուխ: - Հավաքածուն ներառում է 10 SFP 1000BASE-SX ընդունիչ-ընդունիչ (850 նմ, 550 մ, MM, LC): - Հավաքածուն ներառում է 1 SFP28 25G ընդունիչ-ընդունիչ (850 նմ, 100 մ, MM, LC): - Պրոցեսոր՝ երկփեջով 1.2 ԳՀց: - Ֆլեշ հիշողություն՝ 4 ԳԲ: - RAM: 2 ԳԲ: - Փաթեթային բուֆեր՝ 9 ՄԲ: - Կոմուտացիայի թողունակություն՝ 2.4 Տբ/վրկ: - Փաթեթների փոխանցման թողունակություն՝ 458 Mpps: - Չափսեր (Լայնություն×Խորություն×Բարձրություն): 440 x 360 x 44 մմ: - Քաշը՝ 7 կգ: - Էլեկտրաէներգիայի սպառում (առավելագույնը): 125 վտ: - L2 ֆունկցիաների աջակցություն՝ VLAN մինչև 4096, QinQ, STP/RSTP/MSTP, LLDP, Jumbo Frame մինչև 13312 բայթ: - L3 արձանագրությունների աջակցություն՝ Static, RIP, OSPF, IS-IS, BGP, ECMP, VRF; - IPv6 աջակցություն՝ RIPng, OSPFv3, IS-ISv6, BGP4+, DHCPv6, ND; - MPLS աջակցություն՝ ստատիկ LSP, LDP, MPLS VPN, VPLS, MCE; - Աջակցություն 9 անջատիչների վիրտուալիզացմանը մեկ տրամաբանական սարքի մեջ՝ կենտրոնացված կառավարմամբ, մեկ հասցեային տարածքով,
--	--	--	--	--	--

				երթուային և անջատման աղյուսակների համաժամանամբ և > 480 Գբ/վ ներքին թողունակությամբ ստեքի տարրերի միջև: Աջակցություն սարքերի խմբի կառավարմանը որպես մեկ տրամաբանական անջատիչ; Աջակցություն L2 և L3 արձանագրությունների համաժամանակյա աշխատանքին առանց միացված սարքերի միջև STP օգտագործելու MACsec (AES-256) աջակցություն բոլոր միացքներում; Աջակցեք VXLAN, EVPN, VXLAN Gateway-ին; QoS աջակցություն՝ 8 հերթ, SP, WRR, CAR, Shaping, WRED; Անվտանգության աջակցություն՝ ACL, uRPF, 802.1X, AAA, ARP/ND պաշտպանություն: Հեռամետրիայի և iNQA-ի աջակցություն; Աջակցություն PTP (IEEE 1588v2), NTP; Համապատասխանություն էլեկտրամագնիսական համատեղելիության և էլեկտրական անվտանգության չափանիշներին:
	Մուտքի անջատիչներ	H3C	S5130S-28P-EI	«Եյու Էջ 3 Սի Թեքնոլոջիա» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.
				Կառավարման շենքերի մուտքի անջատիչներ՝ 20 միակորի չափով, հետևյալ բնութագրերով. - 24 Ethernet 10/100/1000BASE-T միացքների առկայություն; - 4 1000BASE-X SFP միացքների առկայություն; - Մատակարարման հավաքածուն ներառում է 2 1000BASE-SX ընդունիչ-ընդունիչ (850 նմ, 550 մ, LC): - Պրոցեսոր՝ 1 միջուկ, 800 ՄՀգ; - Ֆլեշ հիշողություն՝ 256 ՄԲ; - RAM: 512 ՄԲ; - Փաթեթային բուֆեր՝ 1.5 ՄԲ; - Փոխարկման հզորություն՝ 56 Գբ/վ; - Թողունակություն (փոխանցման արագություն): 42 Mpps; - Լատենտություն՝ GE < 5 μs; - Աջակցություն 9 անջատիչների վիդեոալիզացմանը մեկ տրամաբանական սարքի մեջ՝ կենտրոնացված կառավարմամբ, մեկ հասցեային տարածքով,

					երթուղային և անջատման աղյուսակների համաժամացմամբ և > 480 Գբ/վ ներքին թողունակությամբ՝ ստեղծի տարրերի միջև: Աջակցություն սարքերի խմբի կառավարմանը որպես մեկ տրամաբանական անջատիչ; Աջակցություն L2 և L3 արձանագրությունների համաժամանակյա աշխատանքին առանց միացված սարքերի միջև STP օգտագործելու VLAN աջակցություն՝ 4096 VLAN ID, մինչև 4094 ակտիվ VLAN: Ջամբո շրջանակների աջակցություն՝ 10240 բայթ: Աջակցում է STP, RSTP, MSTP, PVST, TC-BPDU Guard, Loop հայտնաբերում: LACP-ի և հղումների ագրեգացման աջակցություն (ստատիկ և դինամիկ): Աջակցեք IPv4/IPv6 ստատիկ երթուղավորմանը: Աջակցում է RIP, OSPF, OSPFv3, RIPv6: Աջակցում է IGMP Snooping-ին, MLD Snooping-ին: QoS աջակցություն՝ SP, WRR, SP+WRR, 802.1p/DSCP: ACL աջակցություն՝ IPv4, IPv6, 2-4 շերտ: Անվտանգության աջակցություն՝ AAA, 802.1X, MAC/Web նույնականացում, DoS պաշտպանություն: Աջակցեք ARP և ND պաշտպանությանը: Աջակցում է IP աղբյուրի պաշտպանությանը, DHCP հետախուզությանը, RA պաշտպանությանը: Աջակցություն VRRPv2/v3, BFD, Ethernet OAM, Smart Link: Աջակցեք SPAN/RSPAN հայելային արտացոլմանը: Կառավարման աջակցություն՝ CLI, Web UI, SNMPv1/v2/v3, Telnet, SSH: Zero Touch Provisioning աջակցություն: Էներգախնայողություն. Ավտոմատ անջատում, EEE 802.3az: Աջակցեք 10 կՎ լարման գերլարման պաշտպանությանը: Ձևաչափ՝ 1U, 19 դյույմ դարակի վրա ամրացում, առանց օդափոխիչի:
--	--	--	--	--	---

				- Չափսեր (Լայնություն×Խորություն×Բարձրություն): 440 × 160 × 43.6 մմ; - Քաշը՝ 2.5 կգ; - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ -5-ից մինչև +50 °C; - Պահպանման ջերմաստիճանի միջակայք՝ -40-ից մինչև +70 °C; - Խոնավություն (շահագործման և պահպանման ժամանակ). 5% ից մինչև 95%, առանց խտացման: - Սնուցման աղբյուր՝ 100–240 Վ փոփոխական հոսանք, 50/60 Հց; - Էլեկտրաէներգիայի սպառում (առավելագույնը): 23 Վտ; - MTBF: 150 տարի; - MTTR: 1 ժամ; - Համապատասխանություն Էլեկտրամագնիսական համատեղելիության և Էլեկտրական անվտանգության չափանիշներին:
Սահմանային ռադիոներ	H3C	SR6602-I	«Նյու Էյջ 3 Սի Թեքնոլոջիա» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	- Մեկ սահմանային ռադիոներ հետևյալ բնութագրերով՝ Նպատակ՝ ինտեգրված SCS դարպաս՝ վիրտուալիզացիայի և արհեստական բանականության մշակման հնարավորություններով: 10G SFP+ միացքների քանակը՝ 20; - 1G RJ-45 միացքների քանակը (1000BASE-T): 12; - Ինտերֆեյսի մոդուլներ տեղադրելու համար FIP անցքի առկայություն՝ 1; - SATA 2.5" կրիչների համար նախատեսված անցքերի առկայություն՝ 2; - USB 3.0 միացքիչների առկայություն՝ 1; - Կոնսոլի միացքի առկայություն՝ 1; - PCIe միակցիչի առկայություն՝ 1; - Ներառված է՝ 2 SFP+ ընդունիչ-հաղորդիչ (850 նմ, 300 մ, LC); - Ներառված է՝ 2 450 Վտ հզորությամբ սնուցման բլոկներ; - Ձևաչափ՝ 2U, 19 դյույմանոց պահարան; - Չափսեր (Բ × Լ × Խ): 88 × 440 × 480 մմ;

				- Զերմաստիճանային միջակայք (առանց կրիչների և գրաֆիկական պրոցեսորի)՝ 0-ից մինչև +45 °C; - Զերմաստիճանի միջակայք (սկավառակներով և գրաֆիկական պրոցեսորով)՝ 0-ից մինչև +40 °C; - Խոնավություն՝ 5%-ից մինչև 95%, առանց խտացման: - Պրոցեսոր՝ Intel Xeon, 8 միջուկ, 2.5 ԳՀց; - RAM (նախադրված/առավելագույն)՝ 8 ԳԲ/մինչև 128 ԳԲ DDR4 RDIMM; - Ներկառուցված հիշողություն՝ 4 ԳԲ; - Ներքին SSD M.2 աջակցություն՝ 1 անցք; - Հիշողության անցքերով՝ 4 ավելք DDR4 RDIMM; - Փաթեթային բուֆեր. աջակցություն ապարատային ռեսուրսների վիրտուալիզացիայի համար; - IP վերահասցեավորում (IMIX)՝ > 35 ԳԲ/վրկ; - IPSec թողունակություն (1400 բայթ)՝ > 20 ԳԲ/վ; - AD-WAN կոդավորման արդյունավետություն (IMIX)՝ > 6 ԳԲ/վ; - Էլեկտրաէներգիայի սպառում (ազրեզացման/կոնվերզենցիայի ռեժիմ)՝ 224 Վտ / 558 Վտ; - Աջակցություն սնուցման աղբյուրների և օդափոխիչների ավելորդության և տաք փոխարինման համար; - Հոսափության մակարդակ (MTBF)՝ Կոդային աստիճան (բաժնի); - Comware 9-ի աջակցություն (կոնտեյներային օպերացիոն համակարգ); - Docker-ի և Kubernetes-ի աջակցություն (ներկառուցված Kubelet); - OpenStack Nova հաշվողական աջակցություն; - Վիրտուալիզացիայի աջակցություն (KVM, SR-IOV, VM կյանքի ցիկլ); - EAD աջակցություն, պրոտալ, RBAC, DoS պաշտպանություն, ֆիլտրացում; - Աջակցություն IPSec, ADVPN, L2TP, GRE, NAT, URPF; - Աջակցություն BFD, VRRP, FRR, NQA, ISSU;
--	--	--	--	---

					- IPv4/IPv6 երթուղայնացման աջակցություն՝ RIP, OSPF, IS-IS, BGP; - MPLS L2VPN աջակցություն (Martini, Kompella, CCC, SVC); - Աջակցեք MPLS L3VPN-ին և MCE-ին; - Կառավարման աջակցություն՝ SNMPv1/v2/v3, CLI, Web, SSH, FTP; - Հեռակա տեղադրման և թարմացման միջավայրի աջակցություն՝ USB-ից, ցանցի միջոցով, կրկնակի պատկերով: - Համապատասխանություն էլեկտրամագնիսական համատեղելիության և անվտանգության ստանդարտներին՝ FCC, VCCI, EN, UL, IEC և այլն:
Firewall	H3C	SecPath F1000-AI-90	«Նյու Էջ 3 Սի Թեքնոլոջիա» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.		Firewall (1 հատ) հետևյալ ընդթագրերով. - Ethernet 1000BASE-T միացքների քանակ՝ 14; - Գիգաբիթային Ethernet փոխանցիչ-հաղորդիչներ (SFP) տեղադրելու համար ունիվերսալ միացքների քանակ՝ 8; - 10 Գիգաբիթ Ethernet փոխանցիչ-հաղորդիչներ (SFP+) տեղադրելու համար ունիվերսալ միացքների քանակ՝ 8; - Նվիրված կոնսոլային պորտի առկայություն. - համապատասխանություն; - 2 նվիրված կառավարման ինտերֆեյսների առկայություն; - 2 USB միակցիչների առկայություն; - Հավաքածուն ներառում է 2 սնուցման բլոկ; - Առաքման հավաքածուն ներառում է 2 ընդունիչ-հաղորդիչ (850 նմ, 300 մ, LC): - TI/ACG/IPS/AV/URL ստորագրությունների տվյալների բազաները 3 տարի ժամկետով թարմացնելու հնարավորության լիցենզիա: - 4 ընդլայնման անցքերի առկայություն; - SSD 2 տեղադրելու հնարավորություն; - Ֆլեշ հիշողության տարողունակություն՝ 8 ԳԲ; - SDRAM-ի տարողունակություն՝ 16 ԳԲ; - Ստանդարտ 19 դյույմանոց պահարանում տեղադրելու հնարավորություն:

- Firewall-ի բարձրությունը՝ 1RU; - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ 0-ից մինչև +45 °C; - Աշխատանքային ռեժիմներ՝ երթուղային, թափանցիկ և հիբրիդային: - Աջակցություն Portal, RADIUS, HWTACACS, PKI/CA (X.509), Domain, CHAP, PAP նույնականացման համար: - Վիրտուալ համատեքստերի աջակցություն՝ պրոցեսորի, հիշողության և պահեստի լրիվ տարանջատմամբ: - Անվտանգության գոտու վերլուծություն, ֆիլտրում և պաշտպանություն բազմաթիվ տեսակի հարձակումներից (Land, Smurf, Fraggle, Ping of Death, Teardrop, IP spoofing և այլն): - ASPF ֆիլտրացում, ACL ըստ ժամանակի, օգտատիրոջ և ծրագրի: - MAC-IP կապակցում, MAC-ի վրա հիմնված ACL, MAC սահմանափակում, VLAN թափանցիկ վերահասցեավորում; - Կապի և թողունակության կառավարման քաղաքականություն: - Վիրուսի հայտնաբերում՝ ստորագրության տվյալների բազայի ավտոմատ/ձեռքով թարմացմամբ: - Պաշտպանություն վիրուսներից, DoS/DDoS-ից, SQL ներարկումներից, IDS/IPS շրջանցումից; - Էլ. փոստի և վեբ բովանդակության գտում; - Բոտների վերլուծություն և միջադեպերի կառավարում; - Աջակցում է NAT, ALG, L2TP, IPSec, GRE, SSL VPN; - Աջակցություն ժամանակակից նույնականացման ալգորիթմների և անվտանգության արձանագրություններին; - IPv6 firewall-ի և երթուղայնացման աջակցություն; - Աջակցություն խափանումների հանրուժողականության, վիրտուալիզացիայի, կառավարման համար Web GUI-ի, CLI-ի, SNMP-ի միջոցով:					
--	--	--	--	--	--

					- Աջակցություն ախտորոշման և վիճակագրության համար; - Համապատասխանում է FCC, UL, IEC և այլ միջազգային ստանդարտներին: - Արդյունավետություն՝ • Firewall-ի թողունակություն (1518 բայթ): > 25 Գբ/վ; • DPI թողունակություն՝ > 20 Գբ/վ; • DPI+IPS թողունակություն՝ > 14 Գբ/վ; • DPI+IPS+AV թողունակություն՝ > 14 Գբ/ս/վրկ; • IPSec թունելների քանակը (տեղանքից տեղանք)՝ 8000; • IPSec թողունակություն՝ > 6 Գբ/վ; • SSL VPN օգտատերերի թիվը՝ 10,000; • SSL VPN թողունակություն՝ > 1800 Մբ/վ; • Միաժամանակյա սեանսների առավելագույն քանակը՝ 10,000,000; • Նոր միացումների առավելագույն քանակը վայրկյանում. 300,000; • Անվտանգության պոլիսների առավելագույն քանակը՝ 50,000; • Համատեքստների առավելագույն քանակը՝ 16; • vSystems-ի առավելագույն քանակը՝ 256:
Կայարանի մակարդակ Նախագծված ցանցի կայանային մակարդակը ներառում է երկու հիմնական տեսակի սարքեր՝ Կայանի մակարդակի ներկառուցված անջատիչներ— Երկու L3 անջատիչներ, կուտակված կամ տրամաբանորեն վիրտուալացված, որոնք ապահովում են խափանումների նկատմամբ հանրագործողականություն, բեռի հավասարակշռում և տեղական ենթացանցերի և կենտրոնական շերտի միջև երթուղայնացում: Մուտքի անջատիչներ— մուտքի մակարդակի սարքեր, որոնք միացված են կայանի մակարդակի գլխավոր անջատիչներին, ապահովելով վերջնային սարքերի և տեղական ենթահամակարգերի միացումը:					
Հիմնական անջատիչներ (կայանի մակարդակ)	H3C	S5590-28T8XC-EI	«Նյու Էյջ 3 Սի Թեքնոլոջիս» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	Երկու L3 անջատիչներ (յուրաքանչյուր կայանի համար) միավորված մեկ կույտի կամ տրամաբանական սարքի մեջ՝ հետևյալ բնութագրերով.	
				- 28 Ethernet 10/100/1000BASE-T միացքների առկայություն՝ Combo ռեժիմի աջակցությամբ:	

					- 4 SFP պորտերի (1G) առկայություն, որոնք աշխատում են Combo ռեժիմով: - 8 SFP+ միացիչների առկայություն՝ 1/10 Gb/s պրագության աջակցությամբ: - Ինտերֆեյսի կամ սպասարկման մոդուլներ տեղադրելու համար 1 ընդարձակման անցքի առկայություն: - RJ45 կոնսոլային միացք տեղական կառավարման համար - համատեղելի է: - Առանձին կառավարման պորտի (MGMT) 10/100/1000BASE-T - 1 առկայություն: - USB միակցիչի առկայություն պահուստավորման և կարգավորման բեռնման համար - 1: - 19 դյույմանոց դարակի վրա տեղադրելի, 1U ֆորմ-ֆակտոր - համատեղելի: - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ -5-ից մինչև +45 °C: - Ընդունելի խոնավության միջակայք՝ 5%-ից մինչև 95% (ոչ խտացնող): - Վիճակագրողի տաք փոխարինման աջակցություն - համատեղելի է: - Աջակցում է տաք փոխարինման հնարավորությամբ սնուցման արբյուրներ՝ 1+1 պահեստային չափորոշիչներին համապատասխանությամբ: - Աջակցվող սնուցման արբյուրների քանակը՝ 2: - Մատակարարման հավաքածուն ներառում է 2 փոփոխական 180 Վտ հզորությամբ սնուցման արբյուրներ՝ կարգավիճակի մոնիթորինգի հնարավորությամբ (ակտիվների կառավարմամբ): - Առաքման հավաքածուն ներառում է 2 օդափոխիչ՝ հետևի հոսքի ուղղությամբ (արտանետվող օդային հոսք): - Աջակցություն 25G SFP28 մոդուլների տեղադրման համար - համապատասխանություն: - Առաքման հավաքածուն ներառում է 1 4x25G SFP28 ընդլայնման մոդուլ:
--	--	--	--	--	---

- Առաքման հավաքածուն ներառում է 2 SFP28 ընդունիչ-ընդունիչ (25G, 1310 նմ, 10 կմ, LC, SM); - Մատակարարման հավաքածուն ներառում է՝ 1 SFP+ ընդունիչ-ընդունիչ (10G, 1310 նմ, 10 կմ, LC, SM); - Առաքման փաթեթը ներառում է 3 մետր երկարությամբ DAC SFP+ մալուխ: - Ֆլեշ հիշողության ծավալ՝ 4 ԳԲ; - RAM (SDRAM) - 2 ԳԲ; - Հիշողության բուֆեր փաթեթներ պահելու համար - 9 ՄԲ; - Սարքի անջատման հզորությունը 2.4 Տրիթ/վ է: - Պորտերի կոմուտացիայի հզորություն — > 616 ԳԲ/վ; - Փաթեթների վերահասցեավորման արագություն — > 462 Մալ/վրկ; - L2 ֆունկցիաների աջակցություն՝ VLAN (մինչև 4096), QinQ, STP/RSTP/MSTP, LLDP, GVRP, Jumbo Frames (մինչև 13312 բայթ), միացքի մեկուսացում: - L3 ֆունկցիաների աջակցություն՝ Static, RIP, OSPF, IS-IS, BGP, ECMP, PBR, VRF, ARP; - IPv6 աջակցություն, ներառյալ RIPng, OSPFv3, IS-ISv6, BGP4+, DHCPv6, ND, ICMPv6; - Աջակցեք MPLS-ին, ներառյալ LDP, Static LSP, MPLS L2VPN, MPLS L3VPN, VRF, MCE; - Աջակցություն խափանումների նկատմամբ հանդուրժողականության մեխանիզմներին՝ BFD, VRRPv2/v3, ISSU, Ethernet OAM, DLDP; - Աջակցություն 9 անջատիչների վիրտուալիզացմանը մեկ տրամաբանական սարքի մեջ՝ կենտրոնացված կառավարմամբ, մեկ հասցեային տարածքով, երթուղային և անջատման աղյուսակների համաժամանցմամբ և > 480 ԳԲ/վ ներքին թողունակությամբ՝ ստեփի տարրերի միջև: - Աջակցություն սարքերի խմբի կառավարմանը որպես մեկ տրամաբանական անջատիչ; - Աջակցություն L2 և L3 արձանագրությունների համաժամանակյա աշխատանքին առանց միացված սարքերի միջև STP օգտագործելու				
--	--	--	--	--

					- Աջակցվող անվտանգության մեխանիզմներ՝ 802.1X, MAC նույնականացում, ACL, uRPF, ARP/ND պաշտպանություն, դերային մուտքի կառավարում: - Աջակցություն MACsec կոդավորմանը բոլոր միացքների վրա (AES-256); - Աջակցում է VXLAN, EVPN, VXLAN Gateway, VXLAN M-LAG; - Կառավարման արձանագրության աջակցություն՝ CLI, Web GUI (SmartMC), SNMPv1/v2/v3, NETCONF/YANG, Zero Touch Provisioning; - Աջակցություն կառավարմանը ներկառուցված SmartMC գրաֆիկական ինտերֆեյսի միջոցով: - IRF2 կուտակման աջակցություն՝ մինչև 9 սարք համակցված և մինչև 480 Գբ/վ ընդհանուր թողունակությամբ: - QoS աջակցություն՝ 8 հերթ, WRED, SP, WRR, ձևավորում, դասակարգում ըստ IP, MAC, VLAN, պորտերի, արձանագրության; - Աջակցություն ներկառուցված iNQA (ինտելեկտուալ ցանցի որակի վերլուծություն) ֆունկցիոնալությանը; - Հեռաչափման աջակցություն gRPC-ի միջոցով: - Համապատասխանություն էլեկտրամագնիսական համատեղելիության և էլեկտրական անվտանգության միջազգային ստանդարտներին:
	Մուտքի անջատիչներ (կայանի մակարդակ)	H3C	S5560X-30C-EI	«Նյու Էյջ 3 Սի Թեքնոլոջիա» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	Զուրաբանչյուր կայանի համար մեկ անջատիչ՝ հետևյալ բնութագրերով. - 24 Ethernet 10/100/1000BASE-T միացքների առկայություն, այդ թվում՝ 8 համակցված միացք SFP աջակցությամբ: - 8 SFP պորտերի (1G) առկայություն՝ Combo ռեժիմի աջակցությամբ; - 4 SFP+ միացքիչների առկայություն՝ 1/10 Գբ/վ արագության աջակցությամբ; - Ինտերֆեյսի մոդուլներ տեղադրելու համար 1 ընդարձակման անցքի առկայություն; - RJ45 և միկրո-USB կոնսոլային միացք - համապատասխանություն;

					- Առանձին կառավարման միացք (MGMT) 10/100/1000BASE-T - 1; - 19 դյույմանոց դարակի վրա տեղադրելի, 1U ֆորմ-ֆակտոր - համատեղելի; - Աշխատանքային ջերմաստիճանի միջակայք՝ -5-ից մինչև +45 °C (օպերիկայով մինչև 10 կմ); - Ընդունելի խոնավության միջակայք՝ 5%-ից մինչև 95%՝ առանց խտացման: - Վիճակագրողի տաք փոխարինման աջակցություն - համատեղելի է; - Աջակցում է տաք փոխարինման հնարավորությամբ սնուցման աղբյուրներ՝ 1+1 պահեստային չափորոշիչներին համապատասխանությամբ: - Հավաքածուն ներառում է 2 x 150 Վտ փոփոխական հոսանքի աղբյուրներ՝ կառավարման համակարգով: - Հավաքածուն ներառում է 2 օդափոխիչ՝ հետևի արտանետման խողովակով: - Հավաքածուն ներառում է 2 SFP+ ընդունիչ-հաղորդիչ (10G, 1310 նմ, 10 կմ, LC): - Ֆլեշ հիշողության ծավալ՝ 1 ԳԲ; - RAM (SDRAM) - 2 ԳԲ; - Դրոցեսոր՝ երկմիջուկ 800 ՄՀգ; - Հիշողության բուֆեր փաթեթներ պահելու համար - 4 ՄԲ; - Սարքի անջատման հզորությունը 288 Գբիթ/վրկ է: - Փաթեթների փոխանցման թողունակությունը 216 Mpps է: - Չափերը (Լայնություն×Խորություն×Բարձրություն): 440 × 360 × 43.6 մմ; - Քաշը՝ 6.7 կգ; - L2 ֆունկցիաների աջակցություն՝ STP/RSTP/MSTP, LLDP, VLAN մինչև 4094, QinQ, GVRP, Jumbo Frame մինչև 10K; - L3 ֆունկցիաների աջակցություն՝ Static, RIP, OSPF, IS-IS, BGP, ECMP, PBR, VRF; - IPv6 աջակցություն՝ RIPng, OSPFv3, BGP4+, թունելներ, ND, RA;
--	--	--	--	--	--

					- MPLS աջակցություն՝ LDP, MPLS VPN, VPLS, MCE; - Աջակցություն 9 անջատիչների վիրտուալիզացմանը մեկ տրամաբանական սարքի մեջ՝ կենտրոնացված կառավարմամբ, մեկ հասցեային տարածքով, երթուղային և անջատման աղյուսակների համաժամանցմամբ և > 480 Գբ/վ ներքին թողունակությամբ՝ ստեքի տարրերի միջև: - Աջակցություն սարքերի խմբի կառավարմանը որպես մեկ տրամաբանական անջատիչ; - Աջակցություն L2 և L3 արձանագրությունների համաժամանակյա աշխատանքին առանց միացված սարքերի միջև STP օգտագործելու - Աջակցվող անվտանգության մեխանիզմներ՝ 802.1X, MAC նույնականացում, AAA, ACL, սRPF; - Աջակցություն MACsec կոդավորմանը բոլոր նավահանգիստներում; - VXLAN և EVPN աջակցություն; - QoS աջակցություն՝ SP, WRR, CAR, 802.1p/DSCP առաջնահերթություններ, ձևավորում; - Կառավարման աջակցություն՝ CLI, Web, SNMP, SmartMC, RESTful, Python; - Աջակցություն SPAN, RSPAN, ERSPAN հայելային արտացոլման համար; - Ախտորոշման աջակցություն՝ VCT, DLDP, LLDP, ջերմաստիճանի և օդափոխիչի ազդանշաններ: - Աջակցեք SNMP/NTP-ին և գրանցումներին: - Համապատասխանություն էլեկտրամագնիսական համատեղելիության և անվտանգության ստանդարտներին (FCC, UL, EN, IEC):
Մոնիթորինգի և վերահսկողության համակարգ					
Մոնիթորինգի և վերահսկողության համակարգ	H3C	H3C iMC, Ինտելեկտուալ կառավարման հարթակի ստանդարտ տարբերակ	«Նյու Էջ 3 Սի Թեքնոլոջիս» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	Հայր Էջ 3 Սի Թեքնոլոջիս» ՍՊԸ/ New H3C Technologies Co., Ltd.	Կառավարման և մոնիթորինգի համակարգը ունի հետևյալ բնութագրերը և ֆունկցիոնալ հնարավորությունները. - Հնարավորություն է ամրագրել; - Աջակցություն 75 սարքերի կառավարման համար; - Լրացուցիչ մոդուլներ տեղադրելու միջոցով ֆունկցիոնալությունը ընդլայնելու հնարավորությունը;

-	Սարքերի մասին տեղեկատվության ավտոմատ հավաքագրում SNMP v1/v2c/v3, Telnet, SSH, FTP, TFTP
-	արձանագրությունների միջոցով:
-	Հեռահաղորդակցական սարքավորումներից խափանումների ավտոմատ հայտնաբերում և ախտորոշիչ տվյալների հավաքագրում:
-	Ավտոմատացված միջադեպերի կառավարման և գույքագրման մոդուլ:
-	Ցանցում սարքերի ավտոմատ հայտնաբերում, OSI մոդելի երկրորդ և երրորդ շերտերի ցանցային տուպոլոգիայի և վիրտուալ ցանցերի (VLAN) կառուցում և վիզուալիզացիա:
-	Կոմստատորների արագ տեղակայում, տարրերի կառավարիչ առանձին սարքերի կառավարման համար, պորտերի մակարդակի կառավարում:
-	Բլոկ-հիմնված սարքի կոնֆիգուրացիա՝ հիմնված ձևանմուշների վրա:
-	Կազմաձևման ֆայլերի կառավարում. ձևանմուշների պահպանում, վերականգնում և պահպանում:
-	Կոմստատորների, ռաութերների և firewall-երի կենտրոնացված կառավարում:
-	Երրորդ կողմի ցանցային սարքերի կառավարում, ախտորոշիչ տեղեկատվության և կազմաձևման ֆայլերի հավաքագրում:
-	Արմինիստրատորի մուտքի վերահսկում՝ դերերի, սարքերի տեսակների և աշխարհագրական դիրքի հիման վրա:
-	Կենտրոնացված հաշվետվությունների կառավարում՝ ավտոմատ էլ. փոստով ուղարկելով, PDF և XLS ձևաչափերով արտահանելով:
-	Սարքերի ավտոմատ հայտնաբերում ցանցին միանալիս:
-	Աջակցություն բազմաթիվ ինտերֆեյսի լեզուների, այդ թվում՝ անգլերենի:
-	Վթարների կենտրոնացված վերլուծություն, SNMP թակարդների և Syslog հաղորդագրությունների մշակում:

					- Արդյունավետության մոնիթորինգ (պրոցեսոր, հիշողություն, ինտերֆեյսներ, սխեմներ); - Վիճակագրության հավաքագրում SNMP, Telnet, CLI, SSH, Netconf-ի միջոցով; - Ցուցադրել ցանցի տուրքերի իրական ժամանակում; - Կարգավորումների և ներկառուցված ծրագրերի թարմացումների կենտրոնացված կառավարում; - Կարգավորումների պատմության պահպանում և տարբերակների համեմատում; - Օգտագործողի գործողությունների աուդիտ և համակարգային իրադարձությունների գրանցում; - Ինտեգրացիա LDAP-ի, Active Directory-ի հետ, RADIUS/TACACS+ սերվերի օգտագործման հնարավորություն՝ լրացուցիչ մոդուլով; - Դերային մուտքի կառավարում (RBAC)՝ ճկուն թույլտվությունների կարգավորումներով; - Վեբ-հիմնված կառավարման ինտերֆեյս՝ HTTPS աջակցությամբ; - Ծանուցումներ էլ. փոստով, SMS-ով, Trap-ով; - Պլանավորված հաշվետվությունների ստեղծում (PDF, Excel); - Արտահանել տվյալները CSV, Excel, XML ձևաչափերով; - Աջակցում է 15,000 սարքերի կառավարմանը; - Լրացուցիչ RESTful API մոդուլ՝ արտաքին համակարգերի հետ ինտեգրման համար: - Հյուսիսային ինտերֆեյսների աջակցություն (REST, SNMP, syslog); - ճկուն լիցենզիա հանգույցների և մոդուլների քանակի համար; - Կանոնավոր թարմացումներ և թարմացումներ; - Տեխնիկական փաստաթղթերի և գիտելիքների բազայի առկայություն; - Տեխնիկական աջակցություն 24/7 մեկ տարվա ընթացքում;
--	--	--	--	--	--
